«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19.9-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «պահպանության,» բառից հետո լրացնել «ապրանքների ըստ նշանակության պիտանի լինելու վերաբերյալ համապատասխան ապրանքագիտական փորձաքննությունների, օգտագործված ապրանքների արժեքների փորձաքննությունների իրականացման և եզրակացությունների տրամադրման» բառերը։

Հոդված 2. Օրենքի 19.9-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9-րդ կետով.

«9) իրավաբանական անձանց դիմումով տրվող ապրանքների ըստ նշանակության պիտանի լինելու վերաբերյալ համապատասխան ապրանքագիտական, ինչպես նաև օգտագործված ապրանքների արժեքների փորձաքննության իրականացման և եզրակացության տրամադրման համար	1 օբյեկտ բազային 20-ապա
Ֆիզիկական անձանց դիմումով տրվող ապրանքների ըստ նշանակության պիտանի լինելու վերաբերյալ համապատասխան ապրանքագիտական, ինչպես նաև օգտագործված ապրանքների արժեքների փորձաքննության իրականացման և եզրակացության տրամադրման համար	1 օբյեկտ բազային 15-ապա

Հոդված 3. Օրենքի 19.9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված 1 օբյեկտը ներառում է տարբեր ԱՏԳ ԱԱ ծածկագրեր ունեցող կամ նույն ԱՏԳ ԱԱ ծածկագրով, սակայն տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող առավելագույնը 3 ապրանք, որոնց քանակը (պարկ, տուփ, հատ, փաթեթվածք և այլն), անկախ քաշից, չի կարող գերազանցել 30 միավորը։»։

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։